

ՍՈՒՍԱՆՆԱ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ՀՊՏՀ կառավարման ամբիոնի ասիստենտ

ՀՀ ՋՐՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ՈՒՈՐՏԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՎԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ

Հայաստանի Հանրապետությունն աշխարհի այն երկրներից է, որտեղ կան զբոսաշրջության զարգացմանն անհրաժեշտ բազմազան նախապայմաններ, որոնց՝ պետական մակարդակով արդյունավետ, նպատակային, հոգածությամբ օգտագործման դեպքում ոլորտը կարող է դառնալ ազգային տնտեսության կարևոր բնագավառներից մեկը:

Դիտարկումները ցույց են տալիս, որ ՀՀ-ում զբոսաշրջության զարգացումը պահանջում է հսկայական ռեսուրսներ, որոնց լիարժեք օգտագործումը կարող է մեծապես նպաստել զբոսաշրջային գործունեության հետ կապված խնդիրների լուծմանը՝ Հայաստանն այս ոլորտում դարձնելով ճանաչելի և զարգացած երկիր: Հետևաբար՝ տեղեկատվական ոչ լիարժեք դաշտի պայմաններում ՀՀ զբոսաշրջության շուկայի համեմատաբար ընդգրկուն բնութագրումը պահանջում է վերլուծության ենթարկել ոչ միայն զբոսաշրջությանն առնչվող ծառայությունների զարգացման միտումները, տնտեսական բարեփոխումների և պետական կարգավորման լծակների ազդեցությունը զբոսաշրջության վրա, այլև ոլորտի կառավարման կառուցվածքի բարելավման հնարավորությունները:

Հիմնաբառեր. զբոսաշրջության ոլորտ, կառավարման կազմակերպական կառուցվածք, զբոսաշրջային գործունեություն, զբոսաշրջիկներ

JEL: I31, L11, L83, L89

Հայաստանն իր հարուստ պատմամշակութային ժառանգությամբ, բնական ու մարդկային ռեսուրսներով, ավանդույթներով, որպես գրավիչ զբոսաշրջային երկիր, միջազգային շուկայում ուրույն տեղ գրավելու իրական ներուժ ունի: Զբոսաշրջության զարգացմանն ուղղված պետական քաղաքական

նության, ինչպես նաև մասնավոր հատվածի կողմից իրականացվող բազմաթիվ նախաձեռնությունների արդյունքում վերջին տարիներին ՀՀ-ում նշված ոլորտում զգալի առաջընթաց է գրանցվել:

Ջրոսաշրջությունը Հայաստանի Հանրապետության տնտեսության առաջատար և առավել դինամիկ զարգացող ոլորտներից մեկն է և «Ջրոսաշրջության և զբոսաշրջային գործունեության մասին» ՀՀ օրենքով հայտարարված է որպես տնտեսության զարգացման գերակա ճյուղ¹:

Հայաստանի Հանրապետությունն աշխարհի այն երկրներից է, որտեղ կան զբոսաշրջության զարգացմանն անհրաժեշտ բազմազան նախապայմաններ, որոնց՝ պետական մակարդակով արդյունավետ, նպատակային, հոգածությամբ օգտագործման դեպքում ոլորտը կարող է դառնալ ազգային տնտեսության կարևոր բնագավառներից մեկը:

Հարկ է նշել նաև, որ զբոսաշրջությունը զարգացնելու համար առաջին հերթին պետք է բարձրացվի տվյալ երկրի բնակչության կենսամակարդակը, որովհետև երկիրը զբոսաշրջիկների համար առավել գրավիչ է, եթե այնտեղ բարձր է կյանքի որակը, քանի որ զբոսավայրը միայն տվյալ երկիրը չէ, այլ նաև կյանքն է տվյալ երկրում:

Դիտարկումները ցույց են տալիս, որ ՀՀ-ում զբոսաշրջության զարգացման համար անհրաժեշտ են հսկայական ռեսուրսներ, նախապայմաններ, որոնց լիարժեք օգտագործումը կարող է մեծապես նպաստել զբոսաշրջային գործունեության հետ կապված խնդիրների լուծմանը՝ Հայաստանն այս ոլորտում դարձնելով ճանաչելի և զարգացած երկիր: Հետևաբար՝ տեղեկատվական ոչ լիարժեք դաշտի պայմաններում ՀՀ զբոսաշրջության շուկայի համեմատաբար ընդգրկում բնութագրումը պահանջում է վերլուծության ենթարկել ոչ միայն զբոսաշրջությանն առնչվող ծառայությունների զարգացման միտումները, տնտեսական բարեփոխումների և պետական կարգավորման լծակների ազդեցությունը զբոսաշրջության վրա, այլև ոլորտի կառավարման կառուցվածքի բարելավման հնարավորությունները:

Խոսելով Հայաստանի զբոսաշրջության զարգացման մասին՝ պետք է հաշվի առնել, որ վաղ անցյալում Հայաստանի տարածքով անցնող առևտրական բանուկ ճանապարհները կարևոր դեր են խաղացել նրա տնտեսության և քաղաքների (Արտաշատ, Դվին, Տիգրանակերտ, Անի) զարգացման համար:

Հայոց բնաշխարհի հրաշալիքները, պատմությունն ու հուշարձանները հնուց ի վեր գրավել են զբոսաշրջիկներին: Հայաստան են այցելել աշխարհի տարբեր երկրների ճանապարհորդներ, աշխարհագրագետներ, պատմաբաններ, նկարիչներ, գրողներ ու գիտնականներ:


Վերջին տարիներին, շնորհիվ վարվող պետական քաղաքականության, ինչպես նաև կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, մասնավոր հատվածի և բնակչության համագործակցության, ՀՀ-ում զբոսաշրջության առկա ցուցանիշները դրական միտումներ են դրսևորում, մասնավորապես՝ հանրապետություն եկող միջազգային զբոսաշրջիկների շարժընթացը:

Այժմ ներկայացնենք զբոսաշրջության ոլորտի կառավարման առանձնահատկությունները ՀՀ-ում: Այսպես՝ 1996 թ. զբոսաշրջային գործունեության կանոնակարգման աշխատանքներով զբաղվում էր ՀՀ արդյունաբերության և

¹ Ջրոսաշրջության և զբոսաշրջային գործունեության մասին ՀՀ օրենք՝ ընդունված 17.12.2003 թ.:

առևտրի նախարարության զբոսաշրջության վարչությունը: ՀՀ Կառավարության՝ 2002 թ. դեկտեմբերի 19-ի որոշման համաձայն՝ զբոսաշրջային գործունեության համակարգման աշխատանքներով սկսեց զբաղվել ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարության զբոսաշրջության վարչությունը, իսկ ներկայումս՝ ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության զարգացման քաղաքականության վարչությունը:

Ջբոսաշրջության ոլորտի կառավարման ներկայիս կազմակերպական կառուցվածքը ներկայացնենք գծանկարի միջոցով:




Գծանկար 1. *Ջբոսաշրջության ոլորտի կառավարման կազմակերպական կառուցվածքը ՀՀ-ում²*

Մանրամասն դիտարկելով ՀՀ զբոսաշրջության ոլորտի կառավարման կազմակերպական կառուցվածքը՝ պարզ է դառնում, որ ոլորտի կառավարմամբ զբաղվում է ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության զարգացման քաղաքականության վարչությունը՝ երկու բաժիններով, իսկ Երևան քաղաքում՝ մշակույթի և տուրիզմի վարչությունը:

Կարծում ենք՝ ունենալով հարուստ բնաշխարհի և պատմամշակութային տեսարժան վայրեր, լիարժեքորեն չի օգտագործվում երկրի զբոսաշրջային ներուժը, ինչին պետք է նպաստի նաև զբոսաշրջության ոլորտի կառավարումը մակրոմակարդակում: Ներկայիս կազմակերպական կառուցվածքում ընդգրկված մարմինները անհրաժեշտ չափով չեն լուծում առկա հիմնախնդիրները, որոնք խոչընդոտում են Հայաստանի՝ աշխարհում ճանաչելի զբոսաշրջային երկիր դառնալուն:

Այս ամենը հաշվի առնելով՝ առաջարկում ենք կատարել հետևյալ փոփոխությունները ոլորտի կառավարման կազմակերպական կառուցվածքում:

² Գծանկարը կազմել է հեղինակը:



Պատկեր 2. *Ջրոսաշրջության ոլորտի կառավարման կազմակերպական առաջարկվող կառուցվածքը ՀՀ-ում³*

Անդրադառնանք առաջարկվող կառուցվածի բաժիններին: Ջրոսաշրջության անվտանգության ապահովման բաժնի հիմնական գործառնություններն են.

1. զբոսաշրջային տեղեկատվական ռեսուրսների հավաքագրում և մշակում,
2. մարզերում զբոսաշրջիկների անվտանգության ապահովում,
3. իրադարձային զբոսաշրջության կազմակերպում:


Պետական նպատակային ծրագրերի և կապիտալ ներդրումների բաժինն իրականացնում է.

1. պետական նպատակային ծրագրերի իրականացում և մշտադիտարկում,
2. կապիտալ ներդրումների նպատակային ուղղորդում,
3. զբոսաշրջության շուկայի վերլուծություն և վիճակագրություն,
4. մարքեթինգային տեխնոլոգիաների ներդրում,
5. բյուջետային ծախսերի մշտադիտարկում և գնահատում:

Կարծում ենք՝ ՀՀ զբոսաշրջության բնագավառի կառավարման կատարելագործմանը կարող է նպաստել նաև ՀՀ էկոնոմիկայի նախարարությանը

³ Պատկերը կազմել է հեղինակը:

կից զբոսաշրջության ազգային գործակալության ստեղծումը՝ կառավարման կազմակերպական հետևյալ կառուցվածքով.



Գծանկար 3. «Զբոսաշրջության ազգային գործակալության կազմակերպական կառուցվածք»⁴

Զբոսաշրջության ոլորտի հիմնական առանձնահատկությունն այն է, որ երկրի սոցիալ-տնտեսական ներկա իրավիճակում այն կարող է տնտեսության այլ ոլորտների զարգացումը խթանող շարժիչ ուժ դառնալ:

Զբոսաշրջության զարգացման ներկա փուլում որպես ենթակառուցվածքների ձևավորման ուղղություններ և բնագավառներ, մեր կարծիքով, նպատակահարմար է առանձնացնել հետևյալները՝

- զբոսաշրջիկների անվտանգության ապահովում,
- հասարակական սնունդ,
- տրանսպորտային տնտեսություն,
- էքսկուրսիոն և թարգմանչական ծառայություններ,
- բանկային ծառայություններ,
- տեղեկատվական և հեռահաղորդակցման ծառայություններ:

Զբոսաշրջության ոլորտի զարգացման ժամանակակից ծրագրային միջոցառումները հիմնականում ուղղված են համաշխարհային շուկայում Հայաստանի՝ որպես զբոսաշրջության համար բարենպաստ և զրավիչ երկրի նկարագրի ձևավորմանը: Մասնավորապես՝ իրականացվել են հետևյալ ծրագրային միջոցառումները՝

- ա.** Հայրենական զբոսաշրջային արդյունքը ներկայացվել է Բեռլինում, Դուբայում, Միլանում, Կրաստանում, Լոնդոնում, Մադրիդում, Նիդեռլանդներում և Ճապոնիայում անցկացվող միջազգային ամենամյա զբոսաշրջային ցուցահանդեսներում և տոնավաճառներում, որը լուրջ խթան է Հայաստան այցելող միջազգային զբոսաշրջիկների թվի աճի համար:
- բ.** Ապահովվել է մասնակցությունը Հայաստանում կազմակերպվող ամենամյա «Հայաստանը խոսող քարերի երկիր» զբոսաշրջային ցու-

⁴ Գծանկարը կազմել է հեղինակը:

ցահանդեսներին, միաժամանակ կազմակերպել են նաև այլ բնույթի միջոցառումներ, ինչպես օրինակ՝ «Ժենգյալով հաց» փառատոն ԼՂՀ-ում և այլն:

- գ. Հայաստանի զբոսաշրջային գրավչությունները պահանջարկի շուկաներում ներկայացնելու և զբոսաշրջիկներին անհրաժեշտ տեղեկատվությամբ նախապես ապահովելու նպատակով մշակվել, տպագրվել և տարածվել են բազմատեսակ տեղեկատվական նյութեր միջազգային հեռուստալիքներով և համացանցով:

Այսպիսով՝ Հայաստանում զբոսաշրջության ոլորտի վերլուծության արդյունքում կարելի է փաստել, որ բնագավառի կտրուկ զարգացման և միջազգային շուկայում դիրքերն ամրապնդելու համար անհրաժեշտ է հսկայական աշխատանք կատարել տնտեսության բոլոր մակարդակներում ու բազմաթիվ ուղղություններով: Առկա հիմնահարցերն այնքան բազմաբնույթ են, որ, ըստ էության, անհնար է դրանց արդյունավետ լուծումները գտնել առանց համալիր մոտեցումների, պետական ակտիվ քաղաքականության և առավել արդյունավետ մեթոդների: Ընդ որում, այդ միջոցառումներն ու կառուցակարգերը պետք է նպատակաուղղված լինեն այնպիսի հիմնահարցերի լուծմանը, ինչպիսիք են՝ սեզոնայնության երկարաձգումը, զբոսաշրջային արդյունքի բազմատեսակացումը, ենթակառուցվածքների բարելավումը և նորերի կառուցումը, զբոսաշրջիկների համար անվտանգության երաշխիքների ստեղծումը, նորագույն տեխնոլոգիաների օգտագործումը, ծառայությունների և սպասարկման որակի բարձրացումը, մրցունակ գների ձևավորումը:

Օգտագործված գրականություն

1. Ջբոսաշրջության և զբոսաշրջային գործունեության մասին ՀՀ օրենք՝ ընդունված 17.12.2003 թ.:
2. Ջբոսաշրջության զարգացման հայեցակարգ, 13.02.2008 թ.:
3. www.arlis.am
4. www.mineconomy.am
5. www.yerevan.am

СУСАННА КАРАПЕТЯН*Ассистент кафедры "Управления" АГЭУ****Тенденции развития организационной структуры управления сферой туризма в РА.*** – Республика Армения

– одна из тех стран мира, где есть все предпосылки для развития туризма, и при целенаправленном, рациональном использовании и государственной поддержке, туризм может стать одной из важных отраслей национальной экономики республики.

Исследования показывают, что для развития туризма в РА необходимы огромные ресурсы, полноценное использование которых может способствовать решению задач, связанных с туристической деятельностью и, в конечном итоге, могут превратить Армению в этой сфере узнаваемой и развитой страной. Следовательно, в условиях неполноценного информационного поля, сравнительно широкая характеристика туристического рынка РА требует проведения анализа не только тенденций развития служб, непосредственно связанных с туризмом, воздействия осуществленных экономических реформ и рычагов государственного регулирования туризма, но и возможности совершенствования организационной структуры управления туризмом.

Ключевые слова: *сфера туризма, организационная структура управления, туристическая деятельность, туристы.*

JEL: I31, L11, L83, L89

SUSANNA KARAPETYAN*Assistant at the Chair of "Management" at ASUE****Development Trends of the Organizational Structure of Management in Tourism Sphere of Armenia.*** – The Republic of

Armenia is one of those countries with all prerequisites for tourism development, and with the help of purposeful, rational use and state support, tourism can become one of the most important sectors of the national economy of the Republic.

Studies show that for the development of tourism in the RA huge resources, are needed full use of which can contribute to solving problems associated with tourism activities and, ultimately, can turn Armenia into recognizable and developed country in this area. Therefore, in terms of a defective information field, a relatively wide characterization of the RA tourist market requires analysis not only trends in the development of services that are directly related to tourism, the impact of the implementation of economic reforms and state regulation of tourism leverage, but also opportunities to improve the organizational structure of tourism management.

Keywords: *tourism industry, organizational structure, tourism activities, tourists.*

JEL: I31, L11, L83, L89